



## ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Ծնողական ժողովի մոդել

### Փոխվենք. միավորվե՛նք հանուն ավելի լավ համացանցի

**Ծնողական ժողովի նպատակը՝** համացանցում առկա վտանգների և դրանցից խուսափելու գործիքների մասին գիտելիքների տրամադրում ծնողներին :

**Ծնողական ժողովի խնդիրները՝**

Համացանցի կրթական, մշակութային և տեղեկատվական հնարավորությունների ներկայացում

Համացանցային վտանգների ներկայացում

Ապօրինի, վնասակար եւ ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում

Ծնողների հետ համատեղ համացանցի ապահով օգտագործման կանոնների մշակում

**Մասնակիցներ.** դասղեկ, ինֆորմատիկայի ուսուցիչ, դպրոցական հոգեբան, ծնողներ

**Անհրաժեշտ սարքավորում ներ.** Համացանցին միացված համակարգիչ, պրոեկտոր, էկրան

**Ցուցումներ**

Ծնողական ժողովից 2 օր առաջ մշակեք հարցաթերթիկ (տես հավելվածը) և փոխանցեք ծնողներին

## Ծնողական ժողովի պլանը

1. Նախապատրաստական մաս, ծնողական ժողովի նպատակի ներկայացում **2 րոպե**
2. Համացանցի հնարավորությունների ներկայացում **10 րոպե**
3. Համացանցային վտանգների ներկայացում **10 րոպե**
4. Ապօրինի, վնասակար եւ ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում, մասնավորապես kaspersky գործիքները **10 րոպե**
5. Քննարկումներ **5 րոպե**
6. [www.safe.am](http://www.safe.am) կայքի, [eSafetyKit](#) և [WildWebWoods](#) խաղերի ներկայացում **5 րոպե**
7. Ամփոփում. Համացանցի ապահով օգտագործման ընտանեկան կանոնների ներկայացում **5 րոպե**

## Գրատախտակի ձևավորումը

## Փոխվենք. միավորվե՛նք հանուն ավելի լավ համացանցի

### Ծնողական ժողովի ընթացքը

1. Նախապատրաստական մաս, ծնողական ժողովի նպատակը **2 րոպե**

**Համացանցը** միմյանց հետ կապակցված համակարգչային ցանցերի ամբողջություն է, իսկ **Համաշխարհային Ոստայնը** իրենից ներկայացնում է փողկապակցված փաստաթղթերի ամբողջություն, որոնք միմյանց հետ կապված են **գերհղումներով** և **URL-ներով**

2. **Համացանցի հնարավորությունների ներկայացում 10 րոպե**

- Համացանցային վիճակագրություն  
Աշխարհի բնակչության ավելի քան 40 տոկոսը՝ ավելի քան 3.5 մլրդ մարդ միացել է համացանցին: Հայաստանի բնակչության արդեն կեսից ավելին առցանց է, մինչդեռ համացանցի օգտագործման տրաֆիկի մեծ մասը մնում է ոչ պատշաճ բովանդակություն:
- Գրադարաններ, երաժշտություն և պատկերներ, էլեկտրոնային փոստ, զրուցարաններ

<http://safe.am/ilh/ilh9.html> գրադարաններ

<http://safe.am/ilh/ilh10.html> երաժշտություն և պատկերներ  
<http://safe.am/ilh/ilh5.html> էլեկտրոնային փոստ  
<http://safe.am/ilh/ilh7.html> գրուցարաններ

- Բլոգ, Սոցիալական ցանցեր և Վեբ 2

<http://safe.am/ilh/ilh21.html> Բլոգ  
<http://safe.am/ilh/ilh22.html> Սոցիալական ցանցեր  
<http://safe.am/ilh/ilh23.html> Վեբ 2

- Շարժական (բջջային) տեխնոլոգիաներ

<http://safe.am/ilh/ilh20.html>

### 3. Ապահով Համացանց. համացանցի անվտանգություն, մասնավոր կյանքի գաղտնիություն **10 րոպե**

Տանը, աշխատավայրում կամ դպրոցում մեր գնալով խորացող կախվածությունը տեխնոլոգիաներից պահանջում է համացանցային անվտանգության առավել լայն կիրառում: Անհատները պաշտպանության առաջին գիծն են առցանց ռիսկերից: **Կանգնե՛ք, Մտածե՛ք, Միացե՛ք™** տեղեկատվական արշավի նպատակն է հանրային իրազեկման միջոցով ուղղորդել հասարակությանը դեպի առավել անվտանգ Համացանցի օգտագործում՝ կիրառելով Համացանցի ապահով օգտագործման հմտությունները: **Կանգնե՛ք, Մտածե՛ք, Միացե՛ք™** տեղեկատվական արշավի գլխավոր նպատակն է օգնել քաղաքացիներին հասկանալ ոչ միայն Համացանցից օգտվելու ռիսկերը, այլև անվտանգ առցանց վարքագիծ դրսևորելու կարևորությունը:

- Խորհուրդներ ապահով և անվտանգ լինելու հարցում  
[http://safe.am/stopthinkconnect/stc\\_website\\_tip\\_sheet\\_arm.pdf](http://safe.am/stopthinkconnect/stc_website_tip_sheet_arm.pdf)
- Խորհուրդներ ծնողներին առցանց խաղերի հարցում  
[http://safe.am/stopthinkconnect/stc\\_gaming\\_tips\\_for\\_parents\\_arm.pdf](http://safe.am/stopthinkconnect/stc_gaming_tips_for_parents_arm.pdf)
- Խորհուրդներ ծնողներին և ուսուցիչներին  
[http://safe.am/stopthinkconnect/Parents\\_and\\_Educators\\_Tip\\_Card\\_1\\_arm.pdf](http://safe.am/stopthinkconnect/Parents_and_Educators_Tip_Card_1_arm.pdf)
- Կիրառական անվտանգության մասին խորհուրդներ  
[http://safe.am/stopthinkconnect/Cybersecurity\\_101\\_Tip\\_Card\\_arm.pdf](http://safe.am/stopthinkconnect/Cybersecurity_101_Tip_Card_arm.pdf)

4. Այօրինի, վնասակար եւ ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում, մասնավորապես kaspersky գործիքները **10 րոպե**

5. Քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ **5 րոպե**

<http://www.safe.am/esafe/esafearm/faq.html> հաճախ տրվող հարցեր

- Ո՞ր տարիքից կարելի է համացանց մտնել:
- Կարող ենք արդյոք ունենալ անձնական էլեկտրոնային հասցե, ստեղծել [լրագներ կամ գրանցվել սոցիալական ցանցերում](#)
- Ի՞նչ տնային կանոններ պետք է սահմանել համացանցի օգտագործման համար:
- Ո՞ր տարիքից օգտագործել Ակնթարթային [հաղորդակցման ծրագրերը](#):
- Կարո՞ղ են արդյոք մեծահասակները կարդալ երեխաների հաղորդագրությունները:
- Արդյո՞ք վեբ-խցիկները [հուսալի են](#):
- Ի՞նչ է համացանցային կախվածությունը:
- Ի՞նչ պետք է իմանալ համակարգչային վիրուսների մասին:
- Ի՞նչ պետք է անել, երբ անհանգստացնում են համացանցում:
- Արդյո՞ք օգտակար են ֆիլտրող ծրագրերը:
- Ինչու՞ է վտանգավոր պոռնոգրաֆիան:
- Ինչպե՞ս կարող է համացանցը «նպաստել» թմրամոլությանը:
- Ի՞նչ ազդեցություն ունեն սոցիալական ցանցերը և զրուցարանները դեռահասների հաղորդակցական հմտությունների զարգացման վրա:

6. [www.safe.am](http://www.safe.am) կայքի, [eSafetyKit](#) և [WildWebWoods](#) խաղերի ներկայացում **5 րոպե**

7. Ամփոփում. Համացանցի ապահով օգտագործման ընտանեկան կանոնների ներկայացում **5 րոպե**

## ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Համոզվեք, որ ձեր համակարգիչը ապահովված է հրապատով (firewall) , ինչպես նաև հակավիրուսային ու հակալրտեսային ծրագրաշարով: Թարմացրեք այդ ծրագրերը եւ հետեւեք դրանցից եկող ազդանշաններին: Ստուգեք, արդյո՞ք ձեր ինտերնետային ծառայության մատուցողը առաջարկում է հակավիրուսային եւ հակալրտեսային գործիքներ, որ կարող եք օգտագործել:
- Օգտագործեք փոստադրային գտիչ (ֆիլտր) եւ հնարավորինս գաղտնի պահեք ձեր էլեկտրոնային հասցեն՝ այն վերում չհրապարակելով: Խուսափեք անձանոթների կողմից ուղարկված էլեկտրոնային նամակներից եւ անպայման զննեք այն, եթե այնուամենայնիվ որոշել եք բացել:
- Օպերացիոն համակարգի, համացանցային զննարկիչի, որոնման համակարգի եւ էլեկտրոնային փոստ ծրագրերի համար առավելագույնի հասցրեք ծնողական վերահսկողության կարգավորումները: Երեխաների համար ստեղծեք օգտվողի անհատական գրանցումներ: Համոզվեք, որ գաղտնիության կարգավորումները ամենաբարձր աստիճանի վրա են (այցելեք ձեր զննարկիչի options/ընտրանք հրահանգացանկը):
- Օգտագործեք լրացուցիչ ֆիլտրող ծրագրաշար:
- Կապվեք մասնագետի հետ, երբ ձեր համակարգիչը սկսում է վատ աշխատել. այն կարող է վարակված լինել: Ինտերնետային ծառայության մատուցողը նույնպես պետք է կարողանա խորհրդատվություն տրամադրել:
- Համացանցում անցանկալի բովանդակության հանդիպելիս, զեկուցեք ազգային համացանցային թեժ գծին (տես՝ Օգտակար հղումներ):
- Հնարավորության դեպքում նստեք երեխաների կողքին, երբ նրանք նավարկում են համացանցում: Դա լավագույն ձևն է քննարկելու եւ վստահություն նվաճելու համար: Միասին սովորելը դարձրեք ձեր նպատակը:
- Հիշեք, որ անվտանգության կանոնները ձեր ու ձեր երեխաների համար են: Քաջալերեք նրանց ասել այն ամենի մասին, ինչն իրենց տարօրինակ է թվում:

## Օգտակար հղումներ`

<http://safe.am/indexarm.html>

[http://safe.am/book/Handbook\\_for\\_Young\\_Arm.pdf](http://safe.am/book/Handbook_for_Young_Arm.pdf)

<http://safe.am/stopthinkconnect/stc.html>

<http://safe.am/esafetykit/start.html>

<http://safe.am/esafetykit/downloads/kidsFull.pdf>

<http://safe.am/esafetykit/downloads/parentsFull.pdf>

[http://safe.am/book/Digital\\_World\\_Survival\\_ARM.pdf](http://safe.am/book/Digital_World_Survival_ARM.pdf)

<http://safe.am/ilh/ilh.html>